

## Հայտարարություն

### Հայտարարվում է մրցույթ Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013 թվականի 25-26 և 2014 թվականի 23-24 համարներում ու տեղակայված են նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է:

(Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 14-18-ն ընկած ժամանակահատվածում. մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

ՅՈՒՑԱԿ

Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի

ՀՀ	Ուսումնական հաստատության անվանումը	Առարկա, ժամաքանակ
1	N1 հիմնական դպրոց	ռուսաց լեզու 20ժ մաթեմատիկա 10ժ
2	N2 հիմնական դպրոց	ֆիզիկա 16ժ դաստիարակ 0.5 հաստիք
3	N4 հիմնական դպրոց	դասվար 18ժ
4	N7 հիմնական դպրոց	մաթեմատիկա 10ժ երաժշտություն 15ժ
5	N8 միջնակարգ (հոսքային) դպրոց	դաստիարակ 2 հաստիք դասվար 18ժ
6	N10 հիմնական դպրոց	դասվար 18ժ